Հայտարարվում է մրցույթ՝ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Չկալովկա գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության «Աշխարհագրություն» առարկայի /9 դասաժամ/, «Ֆիզկուլտուրա» առարկայի /15 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթը անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է ՝ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1), մեկ լուսանկար ,3×4 չափի

-բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ(դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձև 5),

- այլ պետությունների քաղաքացիները ՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչում հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում : Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ 2023 թվականի հոկտեմբերի 4-ից մինչև հոկտեմբերի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի հոկտեմբերի 20-ին՝ ժամը 13:00-ին , ՀՀ Գեղարքունիքի մարզի Չկալովկա գյուղի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ.Չկալովկա , 1-ին փողոց ,շենք 7:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093061676 հեռախոսահամարով: